ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1960 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Վեհափառ Հայրապետը հանգամանորեն զեկուցեց Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Պորտուգալիա և Ֆրանսիա կատարած հովվապետական իր այցելության հոգևոր, եկեղեցական և ազգային-հայրենասիրական արդյունքների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհրդի այսօրվա ընդլայնված նիստին հրավիրված էին նաև Վանական խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, Վեհափառ Հայրապետի արտասահմանյան շրջագայության շքախմբի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրության և Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական բաժինների ներկայացուցիչները։

Զեկուցման սկզբում Վեհափառ Հայրապետը ողջունեց բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնեց Երևանում և Մայր Աթոռում սրտագին դիմավորության, ինչպես նաև Իր բացակայության ժամանակ Մայր Աթոռում կատարված բազմապիսի աշխատանքների կանոնավորության և արդյունավորության համար։ Ապա Նորին Սրբությունը մոտ երեք ժամ խոսեց հովվապետական Իր չորսամսյա ուղևորության հոգևոր, ազգային և հայրենասիրական նշանակության մասին, ճշգրտորեն տալով պատկերը ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Պորտուգալիայի և Ֆրանսիայի հայ եկեղեցական համայնքների, ազգային-եկեղեցական մարմինների գործունեության, մխիթարությամբ շեշտելով ամեն տեղ հայ ժողովրդի նվիրումն ու հավատարմությունը Լուսավորչի Գահին, Նրա Գահակալին և վերածնված Մայր Հայրենիքին։

Իր զեկուցման մեջ Վեհափառ Հայրապետը կանգ առավ նաև Լիսաբոնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության և նրա զեկավարներին տված Իր այցելության վրա, բարի լուրեր հաղորդելով ներկաներին Գալուստ Կյուլպենկյան կտակի հետագա հատկացումների մասին՝ Մայր Աթոռի շինարարական ձեռնարկների համար։

Վեհափառ Հայրապետի զեկուցումը ընդունվեց խորին գոհունակությամբ։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը արձանագրեց Վեհափառ Հայրապետի պատմական այս այցելության ազգային, եկեղեցական և հայրենասիրական բացառիկ նշանակությունը Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու և Սփյուռքի հայության համար։

1960 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում լսեց 1960 թվականի ընթացքում Մայր Աթոռի կողմից կատարվող շինարարական, վերանորոգչական աշխատանքների ընթացքի մասին շինարարական հանձնաժողովի անդամ պր. Եփրեմ Ալեքսանյանի և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պր. Արծրուն Գալիկյանի զեկուցագիրը։

1960 թվականի ընթացքում նոր Վեհարանի վերակառուցման աշխատանքների շուրջ 60 տոկոսը կատարվել է։ Նոր Վեհարանը, լրիվ վերանորոգված, օգտագործման կհանձնվի 1961 թվականի աշնանը։ Ամբողջությամբ թիթեղապատված է կտուրը, ավարտվել են ջրմուղի, ջեռուցման, կոյուղու, էլեկտրական գծերի անցկացման աշխատանքները։ Ներկայիս կատարվում է Վեհարանի շենքի ներսի ծեփը։ Տեղադրվում են նորաշեն դռներն ու պատուհանները։

Դանդաղ է ընթանում տպարանի շենքի վերանորոգման աշխատանքը, մանավանդ օդափոխության սարքավորման տեղադրումը։

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցու, Խոր Վիրապի վանքի, Նոր Բայազեդի եկեղեցու վերանորոգման աշխատանքները ընթանում են բավարար թափով և կավարտվեն նախատեսված ժամկետներին։

Ավարտվել են Ս. Հռիփսիմեի և Ս. Շողակաթի վանքերի վերանորոգման աշխատանքները։ Կանոնավոր են ընթանում Ս. Գայանեի վանքի շրջափակի պարսպապատման և միաբանական գերեզմանատան պարսպի կառուցման աշխատանքները։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ արձանագրելով 1960 թվականի ընթացքում Մայր Աթոռի կողմից կատարված շինարարական աշխատանքների բարվոք ընթացքը, զեկուցումների առթիվ կատարեց որոշ դիտողություններ, արեց թելադրություններ և կոնկրետ առաջարկներ՝ նոր թափ հաղորդելու համար 1961 թվականի շինարարական աշխատանքներին, և պարտավորեցրեց Մայր Աթոռի տնտեսական և շինարարական բաժիններին՝ ձեռք առնել անհրաժեշտ բոլոր միջոցները, ըստ նախատեսված պլանի կատարելու և արագացնելու համար Մայր Աթոռի կողմից կատարվող շինարարական աշխատանքները։